ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017 թվականի հունիսի 26-28-ը
Ղազախստանի Հանրապետություն (Աստանա)
գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը**

Սուրեն Կարայան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

Գործուղման վայրը՝ Աստանա (Ղազախստանի Հանրապետություն)

Գործուղման ժամկետները՝ 26.06.2017-28.06.2017

4. **Հրավիրող կողմը**

Եվրասիական Զարգացման Բանկ

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**

Մասնակցություն հունիսի 26-ին կայացած Եվրասիական Բանկի խորհրդի նիստի աշխատանքներին: Բանկի խորհրդում Հայաստանի Հանրապետության լիազոր ներկայացուցիչն է հանդիսանում ՀՀ ֆինանսների նախարար Վարդան Արամյանը, իսկ լիազոր ներկայացուցչի տեղակալ՝ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար Սուրեն Կարայանը:

6. **Քննարկված թեմաները**

Բանկի խորհրդի նիստի օրակարգում ներառվել են Բանկի գործունեությանն առնչվող հետևյալ կարևորագույն հարցեր, որոնք քննարկվել և հաստատվել են Բանկի խորհրդի անդամների կողմից.

- Բանկի վարչության տարեկան հաշվետվություն և Բանկի 2016թ. ֆինանսական հաշվետվության հաստատում,
- Բանկի 2016թ. շահույթի (վնասի) տեղաբաշխումը և պահուստային ֆոնդի ձևավորումը,
- Բանկի վերստուգիչ հանձնաժողովի 2016թ. հաշվետվությունը,
- Բանկի կառավարման համակարգի կատարելագործումը,
- Բանկի ներքին աուդիտի 2016թ. հաշվետվությունը և այլն:

Բանկի ղեկավարությանը հանձնարարականներ են տրվել Բանկի հետագա գործունեության ուղղությունների վերաբերյալ: Առաջարկվել է առավել ուշադրություն դարձնել ինտեգրացիոն նախագծերին:

Քննարկված հարցերն ու ձեռք բերված պայմանավորվածություններն ամրագրվել են նիստի արձանագրությունում:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Այցի ընթացքում կայացել են Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարար Սուրեն Կարայանի հանդիպումները Ղազախստանի ներդրումների և զարգացման նախարար Ժենիս Կասիմբեկի և Ղազախստանի էկոնոմիկայի նախարար Թիմուր Սուլեյմենովի հետ:

Քննարկվել են Հայաստանի Հանրապետության և Ղազախստանի Հանրապետության միջև առևտրատնտեսական համագործակցության ներկա վիճակը և տնտեսության տարբեր ոլորտներում ղազախական ներդրումների ներգրավման հնարավորությունները, ղազախական ընկերությունների՝ հայկական ազատ տնտեսական գոտիներում մասնակցության, զբոսաշրջության, ոսկերչության բնագավառում փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող համագործակցության հնարավորությունները:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Նիստի արդյունքում ստորագրվել է արձանագրություն:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**

Նիստի արձանագրությամբ սահմանվել են հետագա համագործակցության ուղղությունները:

10. **Գործուղվողը**

Սուրեն Կարայան

11. **Ստորագրությունը, ամսաթիվը**

11.07.2017թ.